

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների սպասարկման որակի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 28-րդ կետը:

Մոնիթորինգի օբյեկտը.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) և «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունները:

Մոնիթորինգի առարկան.

1. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման համապատասխան ընթացակարգերի առկայությունը.
2. Տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման համապատասխանությունը սահմանված ընթացակարգերին.
3. Սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը:

Մոնիթորինգի նպատակը.

«Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձի կողմից բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N°381Ն որոշմամբ սահմանված ձևերին համապատասխան Ընկերության կողմից ներկայացվող տեղեկատվության հավաստիության

ընտրանքային ստուգում և համադրում Ընկերությանը պատկանող 1-85 հեռախոսակենտրոնի հեռախոսազանգերի հետ:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2018 թվականի ապրիլի 9-13-ը:

Մոնիթորինգի արդյունքները.

1. Ընկերությունում առկա է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ:
2. Ընկերությունում տեղեկատվության հավաքագրման գործընթացը համապատասխանում է հրամանով սահմանված ընթացակարգին:
3. Սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվությունները համապատասխանում են հանձնաժողով ներկայացված տեղեկատվություններին:
4. Խմելու ջրի մատակարարման ընդհատմանը վերաբերող ողջ տեղեկատվությունը մշակվում, ամփոփվում և պահպանվում է համապատասխան համակարգչային ծրագրով: